ԱՎԱՆԴՆԵՐԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ

Ստեփան Զորյանը «Գրական թերթի» 1953 թ. փետրվարի 5-ի համարում տպագրած «Լոռու ձորում» ակնարկում հանգամանորեն անդրադառնում է Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանի նորակառույց բանավանին. «Երևում են քաղաքատիպ տների կանոնավոր շարքեր, ավելի ճիշտ՝ լավ քաղաքի մի կտոր, որ գետեզերից գընում-բարձրանում է մինչև անտառի փեշերը...»։ Գրողը շարունակում է. «Տներն այստեղ տարբեր գույնի տուֆաքարերից են, հայկական ճարտարապետության լավագույն տարադիցիաների կնիքով...»։ Ստեփան Զորյանը հարկ է համարում նկատել. «Ի դեպ ասեմ, որ ավանը կառուցվում է ճարտարապետ Սոս Մանուկյանի նախագծով...»։

Մանուկյանի ուսումնասիրության տարիները երևանական թվականներն էին (1931—1937 թթ.), երբ սուր բնույթ էին ստացել բանավեճերը ճարտարապետության զարգացման ուղղությունների վերաբերյալ։ Հետագայում կյանքը ցույց տվեց սովետահայ ճարտարապետության զարգացման թամանյանական ուղղության ճշմարտացիությունը, կենսունակությունը։ Թամանյանը նորովի մեկնաբանեց մեր ազգային ճարտարապետությունը՝ տալով նրան արդիական դեմք։ Սոս Մանուկյանը աշակերտեց Թամանյանի ճարտարապետական դպրոցին, հաջողությամբ մասնակցելով մեր քաղաքների, ավանների ու գյուղերի համալիրների, հրապարակների ու փողոցների կառուցապատմանը։ Մոտ հարյուրի է հասնում Մանուկյանի նախագծով իրականացված կառույցների թիվը, ավելացրած մի տասնյակ գյուղերի հատակագծեր։ Նա կազմել է Սևան քաղաքի, Ողջի և Քաջարան բանավանների, էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծերը, այս վերջինը հավանության էր արժանացել և հաստատվել 1939 թվականին։ Այդ հատակագծով էջմիածինը դառնում էր այգի-քաղաք, նրա հրուշակավոր հուշարձանները սահմանագծվում, ստանում էին այգի-թանգարանների կերպարանք, այնուհետև բացվում էր Արարատ—Արագած փողոց-առանցքը, ստեղծվում օղակաձև փողոց-պուրակ, որի շրջագծից ներս տեղաբաշխվում էին քաղաքային-վարչական և 3—4 հարկանի բնակելի շենքերը, շրջագծից դուրս ծավալվում էր անհատական շինարարությունը՝ 1—2 հարկանի մենատներով։ Տասնյակ տարիներ ճարտարապետ Ս. Մանուկյանը կապված մնաց էջմիածնին, չանդիր հետևեց հատակագծի անշեղ իրականացմանը։ Այդ ընթացքում նրա նախագծով վեր բարձրացան մոտ մեկ տասնյակ բնակելի, վարչական, առևտրական, հյուրանոցային շենքեր և ճարտարապետական փոքր շինվածքներ։ Էջմիածնի հատակագծի իրականացման ընթացքում Մանուկյանը ձգտում էր պահպանել պատմական և ճարտարապետական արժեք ունեցող կառույցները։ Նույն նպատակին էր ուղղված նաև նոր կառուցվող շենքերի հարկայնության սահմանափակումը, ինչպես և շենքերը տեղական՝ Աղավնատան բաց վարդագույն տուֆաքարով երեսպատելը։ Հետագայում քաղաքի հատկապես կենտրոնական մասի կառուցապատումը զգալի փոփոխություններ կրեց, քանդվեցին քաղաքի դեմքը բնորոշող, տեսարան գոյություն ունեցող շատ շենքեր, մեծացավ նոր շենքերի հարկայնությունը։

Մանուկյանի լավագույն գործերից է էջմիածնի կուլտուրայի պալատը։ Նրա գլխավոր մուտքի դիմաց և առաջացած երկու սյունակամարաշար թևերի միջև գործում է շրավազան-շատրվանը, որ այնքան բնորոշ է հարավային բնակավայրերի կառուցապատման ավանդույթներին։ Ոչ պակաս հաջողված է շինության ներքին տարածական լուծումը։ Ճարտարապետական համապատասխան մշակումով առանձնանում են լավ համամասնություններով օժտված հանդիսասրահն ու ճեմասրահը։ Պալատի հանդիսասրահը օժտված է ձայնային լավ ակուստիկայով։ Արժե նշել, որ համամիութենական «Մելոդիա» ֆիրման հենց այս սրահում է իրականացրել «Անուշ» օպերայի ձայնագրությունը։

Ճարտարապետի հաջողված գործերից է նաև Աբովյան և Խանհակյան փողոցների միջև իրականացված համալիրը։ Կույբերի կոմբինատի վարչական շենքը։ Վերջինիս բացարձակ չափերը համապատասխանում են տեղանքի և հարևան շինությունների մասշտաբին, մասերի փոխադարձ հարաբերությունները հաճելի տպավորություն են թողնում դիտողի վրա։ Գլխավոր ճակատի վերնամասի համաչափ կամարաշարը և ներքնամասի երկու բազալտակոփ շքամուտքերը կապված են որոշակի ներդաշնակությամբ։ Աչքի են ընկնում մուտքերի թեմատիկ քանդակագործական մշակումները, որ տաղանդավոր քանդակագործուհի Այծեմնիկ Ուրարտուի ստեղծագործություն են։

Ահա այս երկու շինությունների՝ էջմիածնի կուլտուրայի տան և կույբերի կոմբինատի ճարտարապետության համար 1951 թվականին Սոս Մանուկյանն արժանացել է երիտասարդ ճարտարապետների համամիութենական մրցանակաբաշխության երկրորդ մրցանակի։

Երևանի ալյումինի և էլեկտրալամպերի գործարանների բանվորական քաղաքատիպ ավանների կոմպլեքսային նախագծումը Կոմիտասի և Ազատության պողոտայի հատույթի հյուսիսարևելյան կողմում, իրականացվել է ճարտարապետ Ս. Մանուկյանի արվեստանոցում։ Այդտեղ է դասընվում նաև Երևանի ալյումինի գործարանի կուլտուրայի պալատը՝ 600 տեղանոց դահլիճով։ Գլխավոր մուտքը կարմիր գծից քիչ հետ է դրված և երկու կողմի բնակելի շենքերի հետ կազմում է մի միասնություն։ Ճակատի երկու կողմերում տեղադրված են թեմատիկ քանդակներ (քանդակագործ՝ Գրիգոր Բաղալյան)։ Պալատի հատակագծի ներքին սխեման բավական պարզ է, բովանդակային բաժանումների դասավորությունը՝ ռացիոնալ։

Առանձնապես հիշատակ[illegible] է Ս. Մանուկյանի նախագծով (Զ. Տոնիկյանի հեղինակակցությամբ) կառուցված բնակելի շենքը Օրջոնիկիձեի պողոտայի վրա, որ «Հայրենիք» կինոթատրոնի մոտից ձգվում է դեպի հարավ։ Այս շինության բավական հարմարավետ բնակարանների հիմքում դրված է «Հայարդնախագիծ» ինստիտուտի արվեստանոցում մշակված հատակաձևը։ Անկասկած հաջողված է այս բնակելի շինության ծավալատարածական հորինվածքը. այն ունի մեծ քաղաքին վայել մասշտաբ և հարթությունների պլաստիկ մշակում։ Շինության ստորին՝ խանութային հարկը հաճելի համաչափություններ ունեցող սյունակամարաշար է, կերտված Երևանի կոպտատաշ բազալտով։ Վերին հարկերը տուֆակերտ են, ստորին հարկին համահնչուն։ Այն ոչ միայն Օրջոնիկիձեի պողոտայի, այլև Երևանի լավագույն բնակելի շենքերից է։

Այս հոդվածի սահմանափակում հնարավոր չէ կանգ առնել ճարտարապետի ստեղծագործություններից յուրաքանչյուրի վրա, վերլուծել դրանց արժանիքները, թեպետ հիշատակենք բնակելի շենքերի համալիրը Հրազդան մարզադաշտի հարավային կողմում՝ ոչ ստանդարտ բարձունքի վրա, Երևանի ժամացույցի գործարանի բնակելի շենքերը, էլեկտրալամպերի գործարանի բնակելի շենքերը՝ Երևանի Գվարդիականների փողոցի վրա, Լենինականի Գորկու անվան փողոցի վրա կառուցված բնակելի շենքը (Լ. Հակոբյանի հեղինակակցությամբ), Երևանի ալյումինի գործարանի պրոֆիլակտորիան Նորքում (Վ. Տոնիկյանի հեղինակակցությամբ), չամպայն գինիների գործարանի լցման արտադրամասը, ակումբային շենքերը՝ կառուցված Սևանա կղզում, Աշտարակում, Ծովագյուղում և այլուր։

Վերջին երկու տասնամյակի ընթացքում ճարտարապետը և նրա ղեկավարած մասնագիտական կոլեկտիվը զբաղվում է մեր հանրապետության տարածքում նոր ստեղծված արդյունաբերական հանգույցների տեղաբաշխմամբ և հատակագծման սխեմաների մշակմամբ։ Նույը երեսուն այդպիսի հանգույցների հատակագծեր են արդեն կազմվել և իրականացվել։

Ճարտարապետ Սոս Մանուկյանը ծնվել է Սևանի ափին, բարձրադիր Ծովագյուղում։ Եվ մի գովելի նախանձախնդրությամբ նախագծել է հայրենի գյուղի ակումբի շենքը, Հայրենական պատերազմում զոհված համագյուղացիների հուշարձանը, որն արժանացել է համամիութենական մրցանակի։

Մանուկյանն աշխատում է «Հայարդնախագիծ» ինստիտուտում և հավատարիմ թամանյանական ավանդներին՝ իր ողջ եռանդն ու իմացությունը նվիրաբերում է հայրենի երկրի կառուցապատմանը։

Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ
Ճարտարապետ